



Saint Thomas Armenian Church

ՍՈՒՐԲ ԹՈՎՄԱՍ ՀԱՅՑԵՂԵՑԻ

REV. ARNAK KASPARIAN, PASTOR

Փետրուար 8, 1971

Գերաշնորհ

Տ. Թորգոմ Արք. Մանուկեան
Առաջնորդ Ամերիկայի
Նիւ Եորք, Նիւ Եորք

Սիրելի Սրբազն Հայր,

Ներփակ կուղարկենք Զեզի մեր տարեկան տեղեկագիրը որ Ներկայացուեցաւ
Փետրուար 7, 1971ին գումարուած Տարեկան Ծխական ժողովին մէջ, ուր ըն-
դունուեցաւ եւ վաւերացուեցաւ նոյնութեամբ:

Նոյն ժողովին մէջ կատարեցինք Ծխական նորհութեամբ վեց անդամներու
մասնակի ընտրութիւն: Ժողովէն ետք ընդունած ըլլալով Ծխական նորհութեամբ
կազմէն երկու անդամներու հրաժարականները անձնական գործի յաւելեալ
պարտաւորութեանց պատճառներով, հրաւիրեցինք երկու անձնափոխանորդներ
մէկ տարուան պաշտօնավարութեան համար:

Այսու կուգանք ինդըրելու Զեր Սրբազնութեան վաւերացումը եղած
ընտրութեանց արդիւնքին համար, ինչպէս նաև հայցելու Զեր օրհնութիւնը
մեր Ծխական նորհութեամբ նոր կազմին յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան
տարիի մը համար ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյս եւ ի հոգեւոր շինութիւն
համայնքիս սիրեցեալ ժողովուրդին:

Որդիական սիրով

Արքայի երեխա

Առնակ Ք. Գասպարեան
Հովհաննես

Տիարք՝ Եղուարդ Ֆէմեան
Ալբերդ Քիւսի
Բիթըր Մէյսըն
Վահան Նաճարեան
Արթըր Օչի
Անտրու Սահակեան
Եղուարդ Տէվէճեան – անձնափոխանորդ
Յակոբ Ճէպէճեան – անձնափոխանորդ